

# ՁԵՐԴ ՄԵԾՈՒԹՅՈՒՆ ՓԱՅՏԵ ՁԻ

**Պալիք 12 ամիսները մենք կանցկացնենք Փայտե ձիու ընկերակցությամբ: Մեր նոր տանտիրուհու գլխավոր հատկանիշներն են շարժունակությունը, հաշվենկատությունը և հուզականությունը՝ ընդհուպ մինչև պոռթկալը: Ուրեմն, շատերի համար տարին կդառնա անկանխատեսելի քառատրոփ արշավ:**


Այժմ մեզանից յուրաքանչյուրը, անկախ մեզ հովանավորող տոտեմից, պետք է մի քիչ Ձի «դառնան»: Կանա-ակամա մենք կորստեր ենք նրան բնորոշ հատկություններ, եւ լավ կլինի դա անել անգիտակցաբար, ինչը առավելագույն կգնահատվի տարվա հովանավորի կողմից:

## ԹՈՒՅԼ ՏՎԵՔ ՆԵՐԿԱՅԱՆԱԼ ԵՍ ՁԻՆ ԵՄ

անվատախոսությունը, անհնազանդությունը, վճռականությունը: Նա չի հանդուրժում անարդարություն եւ ստիպողականություն: Նա ինքն է ստեղծում իր կյանքային միջավայրը՝ դիմակայելով ու հակառակվելով ամեն կարգի ստիպողականության եւ խրատականության: Այնպես որ, գալիք տարում չփորձեք ճնշում գործադրել շրջապատի վրա. կատաղած Ձի կարող է աքացի տալ... Մյուս կողմից, նա հարուստ ներաշխարհով, ուրախ, հետաքրքիր եւ իմաստուն անձնավորություն է: Սիրում է շփվել շրջապատի հետ, կոլեկտիվի սիրտն է հաճախ դառնում: Ձին գիտի փողի գինը, այն վաստակում է բարեխիղճ աշխատանքով եւ չի դժգոհում ֆինանսների պակասությունից:

Ձին նաեւ ընտանեկ է: Նրա ուշադրությունը կենտրոնացված է, նախաճաշ, հարազատներին, ընտանիքին, ընկերներին: Նա ճանաչարհորդության մեծ սիրահար է: Դեռեւաբար, նույնիսկ երկրյալ տնասերներին, գալիք տարում խորհուրդ ենք տալիս դուրս գալ. շփվել մարդկանց հետ, ներկայանալ աշխարհին...

### ԱՌՆԵՏ - 1948, 1960, 1972, 1984, 1996, 2008



Առնետի ծրագրերը փոփոխական կլինեն, եւ կպահանջվեն մեծագույն ջանքեր դրանք նորից կազմելու համար:

Պուք Ձիուն սանձելու հնարավորություն ունեք, բայց դրա համար հարկավոր է միտքանակ հաղեք բերել համբերություն, խորամանկություն եւ իմաստություն:

Տարին, հատկապես մայիսին, կանխատեսում է հաջող բիզնեսային ձեռնարկներ: Պայմանով, որ չսխալվեք ընտրության մեջ: Փորձեք օգտվել ցանկացած իրավիճակից: Տարին կբերի օգտակար ծանոթություններ, հաջող բանակցություններ: Ձին Առնետին խոստանում է ունեցած սիրային կապի ամրապնդում եւ երջանկություն: Իսկ նոր ծանոթությունը կուրախացնի, եթե միայն նա, իրոք, ձեր ճակատագիրն է:

Հիմա կարելի է դերակատարություն ունեն ընտանիքը եւ շրջապատը, այնպես որ, անհրաժեշտ կլինի առավել ուշադրություն դարձնել մերձավորներին: Նման վարքով դուք եւս, այս ոչ պարզ տարվա ցանկացած պահի, կկարողանաք ապավինել օգնության ու սատարումի:

Ի տարբերություն որոշ այլ ընտանիքի, Առնետին չարժեք ընթանալ Ձիու տեմպով եւ գլխավորապես սուրբալ... Դա շատ կծանրաբեռնի առանց այն էլ աշխատասեր Առնետին: Իսկ վազքի մեջ կարող եք բակարդն ընկնել:

**ՑՈՒԼ - 1949, 1961, 1973, 1985, 1997, 2009**  
Ցուլից մեծ ուժեր կպահանջեն սիրային, ընտանեկան, ընկերական հարաբերությունները: Մի՛ գլացեք սիրո արտահայտման մեջ: Ձիուն դա դուր կգա, եւ ձեզ կկարծառորի ամեն կերպ: Այս տարի Ցուլը չպետք է շրջապատին իր ուժով վախեցնի, հակառակը, նա այժմ մերձավորների հանգիստն է պահպանում: Թող հարազատները զգան ձեր սատարումը, բայց դա արեք սրտանց. վստահելի հարաբերությունները հիմա անհրաժեշտ են նաեւ ձեզ:

Մտահոգություններ կարող են Ցուլին բերել աշխատանքային փոփոխությունները: Տարին պահանջում է վեր քշտել բեքերը, շատ տքնել, պահպանել կարգուկանոն, կատարել պարտականությունները: Միայնակ Ցուլերին խորհուրդ է տրվում սկսել նոր հարաբերություններ: Դրանք կարող են աճել եւ բերել երջանիկ ամուսնություն:

**ՎԱԳՐ - 1950, 1962, 1974, 1986, 1998, 2012**  
Վագրի հարաբերությունները հիմնականում ներդաշնակ են Ձիու հետ, այնպես որ, «ընկերների տիրակալի» համար լավ տարի է գալիս: Ձիու էներգիան ձեզ կտա ստեղծագործական նոր լիցք, ինչի շնորհիվ, կնախաձեռնեք հաջող, երկարամյակ տնային ծրագրեր: Եթե Վագրը առավելագույն զբաղվի ինքնակրթությամբ, նա կփայլի աշխատանքում:

Վագրը պետք է նախանձախնդիր լինի ընտանեկան հարաբերությունների պահպանմանը: Այստեղ հարկ կլինի ցուցաբերել կատվային զգուշություն, որպեսզի գործը կապերի խզման չհասնի: Իր եւ ընտանիքի նյութական բարօրության ուղղությամբ Վագրը կհասնի զգալի արդյունքների, եթե մեծ ռիսկերով չեկարգի մեծ ցուցանիշները, այլ զգուշացնի իր ծրագրերը:

Առողջության խնդիրներում գլխավորը ճիշտ սննդակարգ սահմանելն է: Խոսքը չափավոր եւ առողջ սննդի մասին է: Ձեզ հիմա կարելի է տարվա հովանավորի ձեզ համար սահմանված տեմպի պահպանումը, այդ դեպքում, ամեն ինչ լավ կլինի:

**ԿԱՏՈՒ (ՃԱՎԱՐ) - 1939, 1951, 1963, 1975, 1987, 1999**  
Տարին կանցնի հետաքրքիր, սպասվում են նշանա-

## ՏԱՐՎԱ ՏԱՍՆԵՐԿՈՒ ԴԵՄՔԵՐԸ

կալից փոփոխություններ: Կատվին անհրաժեշտ է զբաղվել ընտանիքով, ծնողներով, ինչպես եւ ընտանեկան անշարժ ունեցվածքով, գերդաստանի վարուց բարձրորդի մատուցած գործերով: Հենց այստեղից գերդաստանի հետ կապերից էլ Կատուն կկարողանա ստանալ իր զարգացման համար անհրաժեշտ էներգիան:

Այս տարի Կատվին չի թույլատրվում իրականացնել կասկածանք հարուցող ներդրումներ. նման գործերը լավ ավարտ չեն ունենա, դուք, պարզապես, ամեն ինչ կկորցնեք: Ձին խոստանում է ապահովված, խաղաղ կյանք, եթե միայն չփնտրեք «բիրոզան աղայություն» կամ գերշահույթներ:

Տարին բարեհաջող է ընտանեկան եւ սիրային հարաբերությունների համար: Ձին թելադրում է Կատվին չխնայել ջանքերը կարիերայի եւ ստեղծագործական գործունեության ուղղությամբ:

Մի՛ վախեցեք փոփոխություններից, առաջնորդվեք՝ «Թանգած ձիուն նույնիսկ գայլը չի սուտենա» հայտնի առածով:

### ՎԻՇՆՊ - 1940, 1952, 1964, 1976, 1988, 2000

Վիշապը Ձիու հրեղեն եղբայրն է: Նրանք միեւնույն կրակի, տարբեր ծնունդ են, այդ պատճառով էլ՝ գալիք տարում ձեզ սպասվում է ճակատագրի ամեն տեսակ սատարում: Ձին դա երաշխավորում է: Սակայն, քանի որ կրակի տարերքը ձեզ համար կլինի առավելագույն ուժգնացած, տարին պահանջում է լինել շատ զգույն, աչալուրջ, հույզերը չչռայել: Լավ կլինի ներքին կրակը հովացնել արտաքին ներգործություններով, օրինակ՝ զբոսանքներ, նախասիրած երաժշտություն, քրային պրոցեդուրաներ:

Ձիու տարուն ցանկալի է ընկերների հետ սկսել ընդհանուր գործ, ստեղծել ֆիրմա: Թեպետ, ըստ տարվա բնույթից բխող օրինաչափությունների, այդ քայլը ողջունելի չպետք է համարվի, բայց հիմա առանձնահատուկ դեպք է, օգտվեք ընձեռնված շանսից:

Ընտանիքավորված Վիշապին ոչինչ չի սպառնում, պարզապես, ուշադրություն ցուցաբերեք կողակցի, հարազատների հանդեպ: Միայնակ Վիշապին Ձին, թեեւ չի խոչընդոտի շփումների շրջանակը ընդլայնելուն, բայց եւ խորհուրդ է տալիս խճճված բացատրություններից խուսափելու համար, չափից ավելի չընդարձակել հարաբերությունների շրջանակը՝ ինքնամոռաց չնետվել զգացմունքների հորձանուտ:

### ՕՉ - 1941, 1953, 1965, 1977, 1989, 2001

Չնայած իր ճկունությանը եւ ցանկացած իրավիճակից շահեկան կորգելու իր ունակությանը, Օձի համար գալիք տարին դժվար կլինի: Ձիու նպատակասլաց վազքը, Օձեր, ցավոք, մնամ չէ ձեր բեկ-բեկ սողքին, դուք ստիպված կլինեք հաճախ ետ շրջվել ճակատագրի անվի տակ չհայտնվելու համար:

Օձին խորհուրդ է տրվում չցուցադրվել, չկիսվել գաղափարներով: Հիմա ձեր գլխավոր զբաղմունքներն են ինքնաճանաչումը, դատողությունները, փիլիսոփայական վերլուծությունները: Ձբաղդեք ընտանեկան խնդիրներով նորացրեք, գարդարեք բնակարանը, ամրապնդեք հարաբերությունները, զբաղվեք երեխաներով: Օձը կստանա մեծ էներգետիկ սնունդ, եթե արձագանքի մերձավորների կարիքներին: Եվ այդ արեք լիասիրտ, առանց գծուծության: Հիշեք, որ Ձին շոռալ է եւ չի հանդուրժի ավելորդ ժխտություն:

**ՁԻ - 1930, 1942, 1954, 1966, 1978, 1990**  
Ձին Ձիու տարուն կլինի իր լծասարքում: Նա այս տարի այնպես կսուրա, որ շրջապատողները

րին հարկավոր կլինի կամ վազել նրա ետեւից, կամ՝ նրա սմբակների տակ չընկնելու համար մեկուսանալ ու թաքնվել:

Ժամանակ է կյանքի կոչել մինչ այդ հետաձգված գործերն ու ծրագրերը: Սուրացեք ամբողջ ուժգնությամբ, բայց եւ մի՛ մոռացեք նաեւ հանգստի մասին, հակառակ դեպքում, ֆինիշ կհասնի մեկ ուրիշը:

Այս տարի ավելի կամրապնդվեն ընտանեկան կապերը, ձեր բոլոր նախաձեռնությունները կատարեն մերձավորները:

Չամուսնացածներին սպասվում են ամուսնության առաջարկ անելու կամ ստանալու հիմնական հնարավորություններ: Տարին բարեկամատ է նաեւ կարիերայի համար: Նրբանկատություն, մտքի սրություն, լսելու եւ պատմելու ունակություն: այս ամենին Ձին լիարժեք տիրապետում է, ուրեմն, փայլատակեք տաղանդներով: Ձին սլանում է իր հաջողությանը ընդհանրապես:

### ԱՅԾ - 1929, 1943, 1955, 1967, 1979, 1991

Այծին սպասվում են փոփոխություններ: Մեր խորհուրդն է ի մի բերել ուժերը եւ պատրաստվել աշխատանքի, հիմնականում աշխատանք ինքն իր վրա: Ժամանակն է հրաժեշտ տալ սովորական, հարմարավետ աշխարհին, շուտով կարիք կունենաք մեծ էներգիայի ձեր պատկերացումները երջանկության ու բարօրության մասին փոխելու համար:

Մի՛ խնայեք փողը օգտակար գնումների համար. ժխտությունը, Ձիու տեսանկյունով, պատվաբեր չէ:

Սա որոնումների եւ նոր փորձ ձեռք բերելու տարի է: Ստեղծագործական պլանում լավ է վստահել ներքին ձայնին, որպեսզի չկորցնեք դեպի ցանկալի տանող արահետը:

Միակ «ուղորդ», որն այս տարի չպետք է փոխվի, ընտանիքն է: Մերձավորները պետք է առանձնահատուկ նրբանկատությամբ ընդունեն Այծի կյանքում կատարվող փոփոխությունները, իսկ Այծը պետք է կարողանա գտնել ինքն իրեն:

Տարին հիմնականում կընթանա խաղաղ:

### ԿԱՊԻԿ - 1944, 1956, 1968, 1980, 1992, 2004

Կապիկը Ձիուն այնքան էլ դուր չի գալիս: Ձին չի խրախուսում Կապիկն բնորոշ խորամանկելու եւ ինտրիգներ հյուսելու ցանկությունները: Մեր խորհուրդն է հրաժարվել շրջապատին հիմարացնելու փորձերից:

Մանավանդ որ, դուք ունեք հատկանիշներ, որոնցով լիովին կարող եք նվաճել տարվա տիրուհու բարեհաճությունը: Այդ հատկանիշներն են՝ ձեր դրական հայացքը աշխարհի հանդեպ եւ փոփոխվող հանգամանքներին հարմարվելու ունակությունը:

Այս տարի ձեզ սպասվում են բազում հետաքրքիր ծանոթություններ: Եթե դուք չթաքցնեք ձեր տաղանդները, մարդիկ արժանիորեն կզննահատեն ձեր ստեղծագործական ներուժը:

Հիմա Կապիկին արժե խնայել ֆինանսները սեւ օրվա համար: Ի դեպ, խնայեք ուժերը նաեւ ձեր ներքին էներգիայի համար. մի՛ մաշեք ձեր հույզերը գուր եւ դատարի բաների համար: Այժմ ամենայլով ժամանակն է առողջությամբ զբաղվելու, ուշադրություն դարձրեք ձեր օրգանիզմին:

### ԱՔԼՈՐ - 1945, 1957, 1969, 1981, 1993, 2005

Աքլորին սպասվում է բարենպաստ մի շրջան: Դա հատկապես վերաբերում է հոգեւոր զարգացմանն ու հարաբերությունների ամրապնդմանը: Առջեւում ողջ տարվա զարմանալի հայտնություններն են: Աքլորը հա-

ճախ կփայլի իր հաստատականությամբ, շոռալ ուրախություն նվիրելու ունակությամբ: Միակ բանը, որ չարժեք անել, դեկավարության հետ կոնֆլիկտի մեջ մտնելն է:

Ավելորդ ակտիվությունն ու ինքնավստահությունը, գործնական ուղրտում, կարող են խնդիրների առաջ կանգնեցնել: Աքլորին սպասվում են մեծ ծախսեր, կա նույնիսկ գրոյի վրա նստելու վտանգ:

Ձիու խորհուրդն է խուսափել նոր գործի հապճեպ ձեռնարկումից, այն ձեզ չի բերի նյութական հաջողություն: Ավելի լավ է չչտապել, համբերել մինչեւ իրավիճակի հարթվելը:

Ընտանիքում Աքլորներին հաճելի նորություններ են սպասվում, բացառված չէ երեխայի ծնունդը, հեռավոր հարազատներից անսպասելի օգնությունը:

Միայնակ Աքլորին այս տարի թույլատրվում է միայն հարաբերություններ ստեղծել, ամուսնական կապերի ձեւակերպումը լավ կլինի հետաձգել մյուս տարվա համար:

### ՇՈՒՆ - 1946, 1958, 1970, 1982, 1994, 2008

Հիմնալի տարի է ձեզ համար: Ձին բարեհաճ է Շան նկատմամբ, քանի որ նրա մեջ տեսնում է ամենակազմ գեներ: Տարին կբերի բարի հարաբերություններ, ընտանեկան ուրախություններ, ստեղծագործական հաջողություններ:

Առավելագույն ուշադրություն ցուցաբերեք գործնական հարցերում, որպեսզի չդառնաք ձեզ հատուկ վստահության ու անշահախնդրության զոհը:

Երազում եք կարիերայի աստիճանով վե՛ր բարձրանալ, Աստված ձեզ հետ. հիմա գործընկերները ձեզ կատարեն առաջնորդության ձեր ձգտմանը: Ձին գտնում է, որ Շունը վարուց դա վաստակել է, միայն բնական համեմատությունը նրան թույլ չէր տալիս վերընթացի:

Մեր խորհուրդն է սովորականից ավելի շատ ժամանակ տրամադրել ընկերներին, ովքեր ձեզ կատարեն դժվար պահերին:

Սիրային դաշտում հնարավոր են անսպասելի հափշտակություններ: Պետք է հիշել, որ նման փայլատակումները հոգեկան հանգստից զրկում եւ հյուսում են: Ավելի ճիշտ կլինի պահպանել հանգիստ, ներդաշնակ հոգեվիճակ, քան ընկնել ոչ խելամիտ սիրային արկածների մեջ:

### ԽՈՉ (ՎԱՐԱՉ) - 1935, 1947, 1959, 1971, 1983, 1995

Խոչը (Վարաչը) այս տարի տրամադրված է վերընթացի, նրա ուղղությունը սարն ի վեր է...

Առաջին հերթին, ուշադրության տեսադաշտում ընտանիքն է: Այստեղ հարաբերություններն ամրապնդվում են, եւ դա կփոխի ձեր ողջ կյանքը՝ կարիերայից մինչեւ աշխարհընկալում:

Ընդհանրապես, ձեր կյանքում շատ բան կախված կլինի ձեզ սիրելի մարդկանցից, եւ դա նաեւ աշխատանքում: Արժե հետեւել կողակցի խորհուրդներին: Բացառված չէ, որ փոփոխությունները պրոֆեսիոնալ դաշտում, սկսվեն գործընկերոջ նախաձեռնությամբ:

Այս տարի հաջողությունը, պարզապես, պատրաստ է հետապնդել Խոչին, պայմանով, որ նա լինի հեզ ու հնազանդ: Ֆինանսական հաջողություն է սպասվում նրանց, ովքեր կստեղծեն ընտանեկան բիզնես: Եթե հեռավոր հարազատները ձեզ առաջարկեն ֆինանսական սատարում, մի՛ հրաժարվեք. այս դեպքում հարցը ոչ միայն փողին է վերաբերում, այլ նաեւ գերդաստանի համախմբմանը:

Հիմա աշխատեք չլարվել. սուրացող Ձին առանց այն էլ ձեր ճակատագրի անիվը կտանի քանոն ուղղությամբ: Իրադարձությունների հոսքում աշխատեք չամուսնել առողջությունը, պահպանեք օրվա ռեժիմ եւ, իհարկե, լավ սնվեք:

**Պատրաստեք ՁՈՒԼԻՆՍԱ ԲԱՊԸՆԱՍ**



Տարին կանցնի հետաքրքիր, սպասվում են նշանա-



Տարին կանցնի հետաքրքիր, սպասվում են նշանա-



Տարին կանցնի հետաքրքիր, սպասվում են նշանա-







ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

ՍԵՐԺ ՍԱՐԳՍՅԱՆ. «ՍՐՏԱՆՑ ՇՆՈՐՀԱՎՈՐՈՒՄ ԵՄ ՁԵԶ...»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Մեր նպատակն անփոփոխ է, եւ ուզում ենք՝ ի դեմս Հայաստանի, տեսնել արդիական պետություն՝ ամուր հասարակական հարաբերություններով եւ կայացած իրավական համակարգով:

Խոստովանենք, որ անցնող տարին նաեւ փորձությունների տարի էր: Չնայած բոլոր դժվարություններին, մեզ հաջողվեց իրականություն դարձնել աշխարհաքաղաքական կենսաթափանցիկ պարբերական բարձրացման խոստացված քաղաքականությունը:

Իր ելույթի վերջում Հայաստանի նախագահը դիմեց մեր բոլոր հայրենակիցներին. «Առանձնահատուկ շնորհավորանքներ եմ հղում սիրիահայ մեր եղբայրներին ու բուլղարից, ովքեր անցնում են ծանր փորձությունների միջով»:

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՏԵՂԱՍԱՍ

Հայաստանի նախագահ, Հայաստանի զինված ուժերի գերագույն զխավոր հրամանատար Սերժ Սարգսյանը Ամանորի եւ Սուրբ Ծննդյան տոների կապակցությամբ, Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Երկրորդի, Հայաստանի պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի եւ գրող, հրապարակախոս Ջորի Բալայանի հետ դեկտեմբերի 31-ին այցելեց երկրի հյուսիս-արեւելյան հատվածի սահմանագիծը պահող պաշտպանական տեղամասերից մեկը:



Սերժ Սարգսյանը տոնական սեղանի շուրջ գրուցեց զինվորների հետ, շնորհավորեց Հայոց բանակի բոլոր զինծառայողներին գալիք տոների կապակցությամբ:

Նախագահը հանդիպեց մարտական դիրքում ծառայություն անցկացնող զինվորների եւ հրամանատարների հետ, շրջայց կատարեց մարտական հենակետում եւ ծանոթացավ

ծառայության անցկացման, ինչպես նաեւ զինվորների կենցաղային պայմաններին: Ծառայության ընթացքում իրենց անձնվիրությունները եւ խիզախությամբ աչքի ընկած զին-

ծառայողներին մի խումբ սպաների եւ զինվորների, Հայաստանի զինվորների համալիրում նախագահը հանձնեց նվերներ: Սերժ Սարգսյանը տոնական սեղանի շուրջ գրուցեց զինվոր-

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱԴԵՏԸ ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐԵՑՑ ՏԱՐՎԱ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Դեկտեմբերի 27-ին, Սատենադարանի միտերի դահլիճում, անցկացվեց Հայաստանի վարչապետ Տիգրան Սարգսյանի մամուլի տարեկան ամփոփիչ ասուլիսը, որը տեւեց շուրջ երեքուկես ժամ: Ասուլիսին մասնակցեցին ավելի քան 50 զանգվածային լրատվության միջոցի զխավոր խմբագիրներ եւ լրագրողներ, տրվել է ավելի քան 5 տասնյակ հարց:

Վարչապետը պատասխանեց հասարակության ուշադրության կենտրոնում գտնվող սոցիալ-տնտեսական կարեւորագույն խնդիրներին վերաբերող հարցերին, անդրադարձավ Մաքսային միությանը միանալու Հայաստանի տնտեսական օգուտներին, կուտակային կենսաթափանցիկ համակարգի ներդրման վերաբերյալ դժգոհություններին, անցնող տարվա ընթացքում տնտեսության ոլորտում Հայաստանի կառավարության ձեռքբերումներին ու

բացթողումներին, մատնանշեց գալիք տարիների համար երկրի տնտեսական քաղաքականության գերակայությունները: Այս տարի գրանցված կարեւորագույն ցուցանիշներից մեկը Հայաստանի վարչապետ Տիգրան Սարգսյանը համարում է արդյունաբերության ոլորտում 7,1 տոկոս աճը, որը, ըստ վարչապետի, բավական հուսալից է: «2013 թվականի երկրորդ կարեւոր ձեռքբերումը գյուղատնտեսության ոլորտում 6,7 տոկոս աճն է: Հայաստանի վար-

չապետը հաջողություն համարեց մասնավոր հատվածի հետ համագործակցության ամրապնդումը: Անդրադառնալով սոցիալական ոլորտին՝ նա նշեց, որ մի քանի նոր ծրագրեր են ներդրվել: «Անապահով խավերի ընտանիքների երեխաները կարող են անվճար սովորել բուհերում, քոլեջներում, եւ մենք հարյուր տոկոսով երաշխավորելու ենք, որ ֆինանսական միջոցների բացակայությունը նրանց ուսման համար խոչընդոտ չի լինի»,- ասաց վարչապետը հավելելով, որ 2013 թվականին 71 միակրթարան է շահագործման հանձնվել: Դա նշանակում է, որ 210 համայնքներում նախադպրոցական հաստատություններն սկսել են սպասարկել 7000 երեխայի:

ՊԱՐԳԵՎՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԼԱՎԱԳՈՒՅՑ ՍԱՐՁԻԿՆԵՐԻՆ

Հայաստանի վարչապետ Տիգրան Սարգսյանի մասնակցությամբ տեղի է ունեցել տարվա լավագույն մարզիկների մեծարժան Հայաստանի սպորտի եւ երիտասարդության հարցերի նախարարության կազմակերպած երեկոն:

Հայաստանի սպորտի եւ երիտասարդության հարցերի նախարարության կողմից անցկացված հարցման արդյունքներով՝ Հայաստանի տարվա լավագույն մարզիկ է ճանաչվել աշխարհի եւ Եվրոպայի չեմպիոն, ազատ ոճի ըմբիշ Դավիթ Սաֆարյանը: Երկրորդ, երրորդ եւ չորրորդ տեղերը զբաղեցրել են աշխարհի առաջնության մրցանակակիրներ, հունահռոմեական ոճի

ըմբիշներ Արթուր Ալեքսանյանը, Արսեն Ջուլֆալյանյանը եւ Ռոման Ամոյանը: Լավագույն տասնյակի հաջորդ հորիզոնականները, համապատասխանաբար, զբաղեցրել են սամբոյի աշխարհի չեմպիոն Աշոտ Դանիելյանը (5-րդ հորիզոնական), ֆուտբոլիստներ՝ Յուրա Մովսիսյանը (6-րդ հորիզոնական) եւ Ջենրիխ Մխիթարյանը (7-րդ հորիզոնական),

ազատ ոճի ըմբիշ, Եվրոպայի առաջնության մրցանակակիր Մուսա Մուրթազալիեյը (8-րդ հորիզոնական), Համաշխարհային ուսանողական խաղերի ոսկե մեդալակիր, սամբիստ Տիգրան Կիրակոսյանը (9-րդ հորիզոնական) եւ բռնցքամարտիկ, Եվրոպայի առաջնության մրցանակակիր Արամ Ավագյանը (10-րդ հորիզոնա-



կան): Տիգրան Սարգսյանը շնորհավորել է լավագույն մարզիկներին եւ մաղթել նորամուտ հաջողություններ ու մարզական ձեռքբերումներ:



2013 ԹՎԱԿԱՆԻ ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՑ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Անցնող տարին Հայաստանի համար հարուստ էր տնտեսական նշանակալից իրադարձություններով: «Արմենպրես»-ն առանձնացրել է դրանցից առավել կարեւորները:

Հայաստանը հայտարարեց Մաքսային միությանն անդամակցելու ցանկության մասին. Սեպտեմբերի 3-ին Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը հայտարարեց Մաքսային միությանը միանալու որոշման մասին: Դեկտեմբերի 24-ին Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի միջոցով հաստատվեց ՄՄ-ին անդամակցելու՝ Հայաստանի «ճանապարհային քարտեզը»:

Կենտրոնական բանկը փոփոխությունների ենթարկեց վերաֆինանսավորման տոկոսադրույքը. Սեպտեմբերին Կենտրոնական բանկը 0,5 տոկոսային կետով բարձրացրեց վերաֆինանսավորման տոկոսադրույքը՝ սահմանելով 8,5 տոկոս: Նոյեմբերին ԿԲ-ն որոշում ընդունեց կրկին նվազեցնել տոկոսադրույքը՝ 0,5 տոկոսային կետով, իսկ դեկտեմբերին եւս 0,25 տոկոսային կետով՝ սահմանելով այն 7,75 տոկոս:

սաթոշակային համակարգը, որի շահառու կհանդիսանան ավելի քան 250 հազար քաղաքացի: Կենսաթոշակային նոր համակարգը Հայաստանի 1974 թ. եւ հետո ծնված յուրաքանչյուր քաղաքացու հնարավորություն կտա բարելավել իր ֆինանսական ապահովությունը ծերության ժամանակ՝ դիվերսիֆիկացնելով անձի սեփական եկամտի աղբյուրները:

Հայաստանն առաջին անգամ թողարկեց Եվրապարտատոմներ. Հայկական Եվրապարտատոմների թողարկումը կարեւորագույն իրադարձություն էր տնտեսության համար, քանի որ առաջին անգամ Հայաստանը դուրս եկավ պարտատոմների արտաքին շուկա:

Ռուսաստանը Հայաստանին զազ կվաճառի իր ներքին շուկայի զներով. 1000 խորմ-ի դիմաց՝ 189 դոլար: Տնտեսության համար առանցքային նշանակություն ունեցող զազի սակագինն առաջիկա 5 տարիներին չի բարձրանա:

Շահագործվեց Հրազդանի ՋԷԿ-ի 5-րդ էներգաբլոկը:

«Ծնվեցին» հայկական առաջին պլանշետ ու սմարթֆոնը. Հայ-ամերիկյան «Technology and Science Dynamics Inc./Armtab Technologies» ընկերությունը, ընթացիկ հաշվարկների համաձայն, յուրաքանչյուր օր հավաքվելու է 100 պլանշետ: Մեկ պլանշետի ինքնարժեքը կկազմի 135 դոլար, որը կվաճառվի 185 դոլարով:

Հայաստանում հիմնադրվեց առաջին ազատ տնտեսական գոտին. 2013 թ. հունվարի 27-ին իր աշխատանքն սկսեց Հայաստանում առաջին ազատ տնտեսական

Հայաստանում անցում կատարեց պարտադիր կուտակային կենսաթոշակային համակարգին. 2014 թ. հունվարի 1-ից կսկսի գործել պարտադիր կուտակային կեն-

Հայաստանը «բացեց» իր երկինքը: Հայաստանը ԵՄ անդամ երկրների քաղաքացիների համար միակողմանիորեն վերացրեց վիզային ռեժիմը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ ՍԵՐՇ ՍԱՐԳՍՅԱՆԸ ԱՅՅՅԵԼԵԼ Է ԵՐԱՔԼՈՒԻ ԳԱՆԹՈՆ

Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը դեկտեմբերի 30-ին, Ն.Ա.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հետ եւ Հայաստանի բարձրագույն դեկավարության ուղեկցությամբ, այցելել է Եռաբլուր պանթոն, հարգանքի տուրք մատուցել Հայրենիքի անկախության համար իրենց կյանքը զոհաբերած հայորդիների հիշատակին:

ՀԱՆՊԻՊՈՒՄ ԳՈՐԾԱՐԱՐՆԵՐԻ ՇԵՑ

Ամանորի եւ Սուրբ Ծննդյան տոների առթիվ Հայաստանի վարչապետ Տիգրան Սարգսյանը դեկտեմբերի 27-ին, Հայաստանի կառավարության նիստերի մեծ դահլիճում, ընդունել է Հայաստանի գործարար համայնքի ներկայացուցիչներին: Կառավարության դեկավար Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանի եւ իր անունից շնորհավորել է տոնական ընդունելությանը մասնակցող գործարարներին գալիք տոների առթիվ եւ մաղթել հաջողություններ:

ԱՐՄ ՇԱԿՈՔՅԱՆԸ՝ ՄԻԵՅԵՎ 12 ՏԱՐԵԿԱՆՆԵՐԻ ԱՃԵՍԱՐՉԻ ՉԵՍԳԻՈՆ

Հայաստանը շախմատի գերագործների նոր սերունդ է պատրաստում: Երկրի ներկայացուցիչ Արամ Հակոբյանը հռչակվեց մինչեւ 12 տարեկանների աշխարհի չեմպիոն: Երեւանի Արամ Հակոբյանը Արաբական Միացյալ Էմիրատների Ալ Էյն քաղաքում ավարտված աշխարհի պատանեկան առաջնությունում Մ12 խմբում, չկրելով ոչ մի պարտություն եւ 11 հնարավորից վաստակելով 9,5 միավոր, նվաճեց աշխարհի չեմպիոնի տիտղոսը:

ԱՆՆԱ ԽԱՆՉԱԼՅԱՆԸ՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՅՆ» ՆԱԽԱԳՈՒ ՇԱԿՈՒՐ

Աննա Խանչալյանը դարձավ «Հայաստանի չայնը» նախագծի երկրորդ եթերաշրջանի հաղթող: Ա.Խանչալյանը 17 տարեկան է: Ծնվել է Թբիլիսիում: Այս տարի ավարտել է Թբիլիսիի թիվ 132 հանրային դպրոցի 12-րդ դասարանը: Հաճախում է Ջ.Փալիաշվիլու անվան թիվ 2 տղամադպրոց երեխաների կենտրոնական դպրոցի ջութակի բաժինը: Դեռ մանկուց մասնակցել է տարբեր միջոցառումների: Ամեն տարի, Թբիլիսիում անցկացվող «Գարունը գարնան մեջ» մրցույթում, Աննան ներկայացրել է իրենց դպրոցը: 2008թ. նա մասնակցել է «Մեկ ազգ մեկ մշակույթ» փառատոնին, 2008-2009 թթ.՝ «One world one family» փառատոնին, իսկ 2010թ. հունիսի 30-ին «Lets change the world for the better» փառատոնին: «Արտեկում» արժանապատվորեն ներկայացրել է Վրաստանը, ստացել պատվոգիր: 2010թ. մասնակցել է «Թաքնված տղամադ» նախագծին: «Թաքնված տղամադ»-ից հետո «Ar daidardo» եւ «106 Fm Fortuna» ռադիոկայանները հանչել են նրան պատվոգիր՝ «Թաքնված տղամադ» նախագծի «Լավագույն ելույթը» անվանակարգում: 2010թ. մասնակցել է «Մեղդիա» մրցույթին, արժանացել «Gran Pri» մրցանակի: 2010թ. եղել է Մակեդոնիայում եւ մասնակցել «Աստղիկներ» մրցույթին, գրավել առաջին տեղը: 2010թ. մայիսի 26-ին Վրաստանի անկախության օրը, երգեց նվագախմբի հետ բայ երկնքի տակ: 2011թ. մայիսի 6-ին նա եւ Մարիամ Կախեղիշվիլին Բաթումում կատարեցին ոստիկանության հիմնը: 2011թ. «Բենդի» խմբով մասնակցեց մանկական եվրատեսիլին, խումբը գրավեց առաջին տեղը, որից հետո նրանց ուղարկեցին Լոնդոն սովորելու «New College Nottingham»-ում: 2012թ. մայիսի 26-ին Վրաստանի անկախության օրը, Քութայիսիում խորհրդարանի շենքի բացման առիթով, կատարեց Վրաստանի հիմնը: Աննան սիրով մասնակցում է բարեգործական միջոցառումների: Նա իր ներդրումն է ունենում այն միջոցառումներում, որոնք օգնում են ծանր հիվանդ երեխաներին:





# 2014 «ՎՐԱՍՏԱՆ» ՀԵՏ

ՀՈՒՆՎԱՐ			ՕԳՈՍՏՈՍ			ՍԵՊՏԵՄԲԵՐ			ՀՈԿՏԵՄԲԵՐ			ՆՈՅԵՄԲԵՐ		
Երկ.	6	13 20 27	Երկ.	4	11 18 25	Երկ.	1	8 15 22 29	Երկ.	6	13 20 27	Երկ.	3	10 17 24
Երբ.	7	14 21 28	Երբ.	5	12 19 26	Երբ.	2	9 16 23 30	Երբ.	7	14 21 28	Երբ.	4	11 18 25
Չրք.	1	8 15 22 29	Չրք.	6	13 20 27	Չրք.	3	10 17 24	Չրք.	8	15 22 29	Չրք.	5	12 19 26
Հինգ.	2	9 16 23 30	Հինգ.	7	14 21 28	Հինգ.	4	11 18 25	Հինգ.	9	16 23 30	Հինգ.	6	13 20 27
Ուրբ.	3	10 17 24 31	Ուրբ.	8	15 22 29	Ուրբ.	5	12 19 26	Ուրբ.	10	17 24 31	Ուրբ.	7	14 21 28
Շաբ.	4	11 18 25 26	Շաբ.	9	16 23 30	Շաբ.	6	13 20 27	Շաբ.	11	18 25 31	Շաբ.	8	15 22 29
Կիր.	5	12 19 26 27	Կիր.	10	17 24 25	Կիր.	7	14 21 28	Կիր.	12	19 26 27	Կիր.	9	16 23 30

ՓԵՏՐՎԱՐ			ՕԳՈՍՏՈՍ			ՍԵՊՏԵՄԲԵՐ			ՀՈԿՏԵՄԲԵՐ			ՆՈՅԵՄԲԵՐ		
Երկ.	3	10 17 24	Երկ.	4	11 18 25	Երկ.	1	8 15 22 29	Երկ.	6	13 20 27	Երկ.	3	10 17 24
Երբ.	4	11 18 25	Երբ.	5	12 19 26	Երբ.	2	9 16 23 30	Երբ.	7	14 21 28	Երբ.	4	11 18 25
Չրք.	5	12 19 26	Չրք.	6	13 20 27	Չրք.	3	10 17 24	Չրք.	8	15 22 29	Չրք.	5	12 19 26
Հինգ.	6	13 20 27	Հինգ.	7	14 21 28	Հինգ.	4	11 18 25	Հինգ.	9	16 23 30	Հինգ.	6	13 20 27
Ուրբ.	7	14 21 28	Ուրբ.	8	15 22 29	Ուրբ.	5	12 19 26	Ուրբ.	10	17 24 31	Ուրբ.	7	14 21 28
Շաբ.	1	8 15 22 29	Շաբ.	9	16 23 30	Շաբ.	6	13 20 27	Շաբ.	11	18 25 31	Շաբ.	8	15 22 29
Կիր.	2	9 16 23 30	Կիր.	10	17 24 31	Կիր.	7	14 21 28	Կիր.	12	19 26 27	Կիր.	9	16 23 30

ՍԱՐՏ			ՕԳՈՍՏՈՍ			ՍԵՊՏԵՄԲԵՐ			ՀՈԿՏԵՄԲԵՐ			ՆՈՅԵՄԲԵՐ		
Երկ.	3	10 17 24 31	Երկ.	4	11 18 25	Երկ.	1	8 15 22 29	Երկ.	6	13 20 27	Երկ.	3	10 17 24
Երբ.	4	11 18 25	Երբ.	5	12 19 26	Երբ.	2	9 16 23 30	Երբ.	7	14 21 28	Երբ.	4	11 18 25
Չրք.	5	12 19 26	Չրք.	6	13 20 27	Չրք.	3	10 17 24	Չրք.	8	15 22 29	Չրք.	5	12 19 26
Հինգ.	6	13 20 27	Հինգ.	7	14 21 28	Հինգ.	4	11 18 25	Հինգ.	9	16 23 30	Հինգ.	6	13 20 27
Ուրբ.	7	14 21 28	Ուրբ.	8	15 22 29	Ուրբ.	5	12 19 26	Ուրբ.	10	17 24 31	Ուրբ.	7	14 21 28
Շաբ.	1	8 15 22 29	Շաբ.	9	16 23 30	Շաբ.	6	13 20 27	Շաբ.	11	18 25 31	Շաբ.	8	15 22 29
Կիր.	2	9 16 23 30	Կիր.	10	17 24 31	Կիր.	7	14 21 28	Կիր.	12	19 26 27	Կիր.	9	16 23 30

ՍՊՐԻԼ			ՕԳՈՍՏՈՍ			ՍԵՊՏԵՄԲԵՐ			ՀՈԿՏԵՄԲԵՐ			ՆՈՅԵՄԲԵՐ		
Երկ.	7	14 21 28	Երկ.	4	11 18 25	Երկ.	1	8 15 22 29	Երկ.	6	13 20 27	Երկ.	3	10 17 24
Երբ.	8	15 22 29	Երբ.	5	12 19 26	Երբ.	2	9 16 23 30	Երբ.	7	14 21 28	Երբ.	4	11 18 25
Չրք.	9	16 23 30	Չրք.	6	13 20 27	Չրք.	3	10 17 24	Չրք.	8	15 22 29	Չրք.	5	12 19 26
Հինգ.	10	17 24	Հինգ.	7	14 21 28	Հինգ.	4	11 18 25	Հինգ.	9	16 23 30	Հինգ.	6	13 20 27
Ուրբ.	11	18 25	Ուրբ.	8	15 22 29	Ուրբ.	5	12 19 26	Ուրբ.	10	17 24 31	Ուրբ.	7	14 21 28
Շաբ.	4	11 18 25	Շաբ.	9	16 23 30	Շաբ.	6	13 20 27	Շաբ.	11	18 25 31	Շաբ.	8	15 22 29
Կիր.	5	12 19 26	Կիր.	10	17 24	Կիր.	7	14 21 28	Կիր.	12	19 26 27	Կիր.	9	16 23 30
Կիր.	6	13 20 27	Կիր.	11	18 25	Կիր.	8	15 22 29	Կիր.	13	20 27	Կիր.	10	17 24 31

ՍՄՅՈՒՍ			ՀՈԿՏԵՄԲԵՐ			ՀՈՒՆԻՍ			ՀՈՒՆԻՍ		
Երկ.	5	12 19 26	Երկ.	2	9 16 23 30	Երկ.	7	14 21 28	Երկ.	9	16 23 30
Երբ.	6	13 20 27	Երբ.	3	10 17 24	Երբ.	8	15 22 29	Երբ.	10	17 24
Չրք.	7	14 21 28	Չրք.	4	11 18 25	Չրք.	9	16 23 30	Չրք.	11	18 25
Հինգ.	1	8 15 22 29	Հինգ.	5	12 19 26	Հինգ.	10	17 24 31	Հինգ.	12	19 26
Ուրբ.	2	9 16 23 30	Ուրբ.	6	13 20 27	Ուրբ.	11	18 25	Ուրբ.	13	20 27
Շաբ.	3	10 17 24 31	Շաբ.	7	14 21 28	Շաբ.	12	19 26	Շաբ.	14	21 28
Կիր.	4	11 18 25	Կիր.	8	15 22 29	Կիր.	13	20 27	Կիր.	15	22 29

**ՀՈՒՆՎԱՐ.** 1, 2 - Նոր տարի, 6, 7 - Սուրբ Ծնունդ, 19 - Ջրօրհներ: **ՍԱՐՏ.** 3 - Մայրության օր, 8 - Կամանգ միջազգային օր: **ՍՊՐԻԼ.** 9 - փրատանի ազգային միասնության օր, 18 - Կարմիր ուրբաթ, 20 - Սուրբ Ջատիկ, 21 - Հանգուցյալների հիշատակի օր: **ՍՄՅՈՒՍ.** 9 - Հաղթանակի օր, 12 - Սուրբ Անդրեաս Առաքյալի հիշատակի օր, 26 - փրատանի պետական անկախության վերականգնման օր: **ՕԳՈՍՏՈՍ.** 28 - Սարիանդրա: **ՀՈԿՏԵՄԲԵՐ.** 14 - Սցիներոքա: **ՆՈՅԵՄԲԵՐ.** 23 - գիողդրքա:

Խմբագիր՝  
**ՎՐԱՍՏԱՆԻ ԹՅՈՒՆ**

Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105  
Գ.Աթոնելի փ. 5 Հեռ. 2990-739, 2990-774  
www.vrastan.ge  
E-mail: vrastan@caucasus.net

Գրանցման վկայական  
№ 4 4 - 1439  
«ԿՈՆՈՐ» հրատարակչություն

«ВРАСТАН»  
Тбилиси, Грузия  
«VRASTAN»  
Georgia, Tbilisi  
Индекс 66445